միայն, որ նա շատ գեղեցիկ էր, այլ ամէն երիտասարդ մի առանձին բախտաւորութիւն էր համարում լինել փեսայ այն ընտանիքի, որ ամբողջ գաւառի մէջ վայելում էր մեծ յարգանք: Փեսաների թիւը այնքան շատ էր, որ չգիտէին, թէ որին պէտք էր ընտրել, կամ որին պէտք էր մերժել: Վերջապէս ընտրեցին Մահլամ գիւղի մելիքի որդուն, ի հարկէ, առանց հարցնելու իմ մօր կամքը եւ առանց ստանալու նրա հաճութիւնը: Երբ կատարւում էր հարսանիքի հանդէսը, հէնց այն գիշերը, երբ նորահարսին եւ փեսային պէտք է եկեղեցի տանէին, յանկարծ գտան նորահարսին անյայտացած հօր տնից: Խայտառակութիւնը չափ եւ սահման չունէր: Չար լեզուները սկսեցին զանազան կերպով բացատրել նրա պատճառը. ոմանք ասում էին՝ թուրքերը գողացել են նորահարսին, ոմանք ասում էին իրան սպանել է, ոմանք ասում էին՝ որ նա ծածուկ սիրում էր մի ուրիշին եւ նրա հետ փախել է: Այդ կարծիքներից արդեօք ո՞րն էր ուղիղ, — այն ժամանակ դժուար էր ստուգել, իսկ ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ իմ մայրը կորաւ եւ կորաւ:

Անցան տարիներ, իմ մօր մասին տեղեկութիւն չկար: Նրա մայրը կսկիծից մեռաւ, նա չկարողացաւ տանել իր աղջկայ ցաւը: Միւսները բոլորովին մոռացան նրան:

Յանկարծ յայտնուեցաւ նա իր ամուսնի եւ երեք զաւակների հետ: Այն ժամանակ միայն ստուգուեցաւ, որ վերջին ենթադրութիւնը ուղիղ էր. արդարեւ, մայրս փախել էր իր սիրած տղամարդի հետ: Հասարակական կարծիքը սկսեց դատապարտել նրան: Նրան չներեցին հարազատ եղբայրները եւ մինչեւ անգամ հայրը, չնայելով, որ նա արդէն ամուսին էր եւ երեք զաւակների մայր: Բայց ինչո՞վ էր մեղաւոր հին յանցաւորը, ինչո՞վ էին մեղաւոր նրա զաւակները. միթէ՞ ծնողների յանցանքը տարածւում է որդիների վրա...

Իմ քեռիները զայրացան աւելի այն պատճառով, երբ տեսան, որ իրանց քոյրը ամուսնացել է մի տղամարդի հետ, որին ատում էին, որի ազգատոհմի հետ ժառանգական թշնամութիւն ունէին, եւ, որ աւելի գլխաւորն է՝ աղքատ էր: Այսպիսի ամուսնութիւնները մոռանալ են տալիս հին ոխակալութիւնը եւ բառնում են հին վրէժխնդրութիւնը երկու տոհմերի միջից: Բայց մայրս չկարողացաւ քաւել այդ մեղքը, նրա ամուսնութիւնը չկարողացաւ կապել թշնամի տոհմերին միմեանց հետ: Մօրս հայրը անիծեց նրան, եւ նա այնուհետեւ չհամարձակուեցաւ ոտք կոխել ծնողական տան շեմքի վրայ, մինչեւ այն օրը, որ հօրս մահը մի փոքր մեղմացրուց նրանց խստասրտութիւնը:

Այժմ պիտի խօսեմ այդ ցաւալի մահուան մասին: Հայրս դիմելով դէպի պանդխտութիւն, նպատակ ունէր Կ. Պոլիս գնար, ուր այն ժամանակ լինում